ArmLur.am

I SSN 1829-2763

9 771829 276006 23099

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

11 հուլիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

99
(2765)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՔՊ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՀՐԱՀԱՆԳ ԵՆ ՍՏԱՑԵԼ ՆԿԱՐԵԼՈՒ ԵՎ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ



Խորհրդարանական իշխող մեծամասնությունը շարունակում է իր խայտառակ ու ոչ ադեկվատ գործելաոճը: Երեկ նրանք պաշտոնապես շրջանառության մեջ են դրել Թագուհի Թովմասյանի՝ որպես Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունների դադարեցման մասին օրինագիծը, որը պետք է քննարկվի այսօր մեկնարկելիք ԱԺ նիստերի ժամանակ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իրականում ՔՊ-ականները անակնկալի են եկել՝ իմանալով, որ հարցն այնքան է լրջացել, որ ԱԺ նիստերի օրակարգ է մտել. մինչ այդ շատ պատգամավորներ անլուրջ են համարել նախաձեռնությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրները պնդում են, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ քարտուղար Արթուր Հովհաննիսյանը հանձնարարություն են ստացել Բաղրամյան 26-ից՝ Նիկոլ Փաշինյանից, որպեսզի հետեւեն ԱԺ բոլոր ՔՊ-ական պատգամավորների քայլերին, ու հանկարծ չլինի մեկը, որն առանց հարգելի պատճառի բացակայի ԱԺ ՄԻՊ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին լիազորություններից զրկելու հարցի քվեարկությունից: Ավելին՝ մեր աղբյուրները հայտնում են, որ հրահանգվել է ՔՊ պատգամավորներին, ինչպես բոլոր կարեւոր քվեարկություններից առաջ, ԱԺ ընտրական գործընթացը սկսել հեռախոսի տեսանկարահանումը միացված: Այսինքն՝ պատգամավորը միացնում է հեռախոսը, եւ վիդեո կադրում պետք է երեւա, թե ինչպես է մտնում քվեախցիկ, քվեարկում հրահանգված սցենարով, ապա ծալում այն, բերում, նետում քվեախցիկը եւ դուրս գալիս: Ողջ գործընթացի ժամանակ չպետք է հեռախոսը անջատված լինի, որպեսզի կասկածների դեպքում ֆրակցիայի ղեկավարությունը ստուգի ՔՊ-ականների քվեարկությունը:

Այսպիսով, կասկած չկա, որ ժողովրդավարության կեղծ քողի տակ ԱԺ-ն զրկվում է հանձնաժողովի միակ ընդդիմադիր նախագահից եւ վերածվում է ՔՊ-ականների հավաքատեղիի:



Հեղափոխական պաշտոնյաները պատգամավորի մանդատ կամ պաշտոն ստանալուց հետո են միայն կարողացել տուն ու ավտոմեքենա գնել կամ առնվազն դրանցից մեկը: Օրինակ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը համատեղ սեփականությամբ անհատական բնակելի տուն ունի Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, ավտոմեքենա գնել է 2019 թվականին, երբ ԱԺ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր էր: Այս տարի նա գնել է 2012 թվականի արտադրության «Մերսեդես Բենս» մակնիշի ավտոմեքենա: Պատգամավորից նախարար դարձած Նարեկ Մկրտչյանը որպես կանխիկ դրամ հայտարարագրել է 4 մլն 220 հազար դրամ, իսկ բանկային հաշվին նրա գումարները կազմել են 4 մլն 570 հազար դրամ եւ 7 մլն 168 հազար դրամ: Մեկ տարվա ընթացքում նախարարը կարողացել է վաստակել 28 մլն դրամ, որից 20 մլն դրամը նրա նախարարի աշխատավարձն է եղել, 3 մլն դրամ վարձատրություն է ստացել Ամերիկյան համալսարանից, ինչպես նաեւ «Արդշին» եւ «Ակբա» բանկերից փոխառություններ ունի ստացած՝ 2 մլն 972 հազար եւ 1 մլն 400 հազար դրամի չափով: Նրա վարկերի մնացորդը տարվա վերջում 8 մլն դրամի չափով է եղել: Ծախսերի մասին որեւէ տեղեկություն նախարարը չի ներկայացրել:




Կառավարությանը ենթակա առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը 2022 թվականի նոյեմբերի 10-ից ղեկավար չունի: Այդ օրը Նիկոլ Փաշինյանը որոշում էր ստորագրել եւ նախկին ղեկավար Հակոբ Ավագյանին ազատել այդ պաշտոնից: Մենք գրել էինք, որ կառավարությունը նրան պաշտոնանկ անելու ներքին որոշում ուներ, սակայն միջոց չէր գտնում: Ավելի քան ութ ամիս սպասելուց հետո, ի վերջո, այդպիսի որոշում կայացվեց: Եվ, ահա, Նիկոլ Փաշինյանի որոշումից հինգ ամիս անց անգամ Առողջապահական եւ աշխատանքի տեսչական մարմինը ղեկավար չունի: Ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարում է նախկին ղեկավարի տեղակալը՝ Սլավիկ Սարգսյանը: Ընդ որում՝ վերջինս մարտի 31-ին էր նշանակվել կառույցի փոխտնօրեն, եւ նրան վստահված էր հենց Ավագյանին «հսկելու» գործառույթը: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ Փաշինյանը տեսչական մարմիններում ղեկավար գտնելու «առաքելությունը» վստահել է իր աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին, իսկ վերջինս էլ չի կարողանում մարդ գտնել այդ պաշտոններում առաջադրելու համար: Բանն այն է, որ շատերը ոչ մի ցանկություն չունեն աշխատելու Հարությունյանի, առավել եւս՝ այս իշխանության հետ: Ու նման կարեւոր մարմիններում «բարդակ» վիճակ է. ո՛չ տեր կա, ո՛չ էլ վերահսկող: Կարեւորը ամեն ամիս պարտաճանաչ աշխատավարձ ու պրեմիաներ են ստանում: Ու սա վերաբերում է բոլոր նման կառույցներին, որտեղ ամիսներով ղեկավար չեն նշանակում, իսկ նշանակելու դեպքում նշանակվածները «ձգում են» առավելագույնը մեկ տարի: Տեսնենք, թե, ի վերջո, երբ Հարությունյանին կհաջողվի մեկ անձ գտնել այդ պաշտոնում նշանակելու համար:



2022 թվականի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի քրեական գործը ՀՀ քննչական կոմիտեից տեղափոխվել է Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչություն: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ-ն պայթյունից տուժածներին կրկին հրավիրում է ԱԱԾ՝ հարցաքննության: Մինչ այդ, նկատենք, որ ողբերգական դեպքից 1 տարի անց առեւտրի կենտրոնի սեփականատերերից որեւէ մեկին նախաքննական մարմինը պատասխանատվության չի կանչել: Հիշեցնենք, որ իրավապահ համակարգը ողբերգական դեպքով այս տարվա փետրվար ամսին հայտարարեց, որ 2021թ. ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի եւ 2022 թվականի օգոստոսի 14-ին նույն առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի եւ փլուզման դեպքի առթիվ նախաձեռնված եւ միացված քրեական վարույթի շրջանակում 2023թ. փետրվարի 22-ին «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրեն Ի. Մ.-ն կալանավորվել էր: Նշված վարույթի շրջանակում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի 5 անձ՝ «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրենը, փոխտնօրենը եւ 3 տնտեսվարողները, որոնց պահեստային տարածքում առաջացել է պայթյունը: Այս պահին, սակայն, արգելանքի տակ է գտնվում մեկ անձ. «խոշոր ձկները» մինչ օրս պատասխանատվության չեն ենթարկվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը հարցաքննել էր Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի սեփականատեր Ռազմիկ Զախարյանին, սակայն նրա պատասխանատվության հարցը իրավապահներն այդպես էլ մեկ տարի անց չկարողացան առաջ քաշել: Հիշեցնենք, որ ողբերգական պայթյունը խլեց 17 հոգու կյանք, որոնցից մեկին փրկարարները այդպես էլ չգտան, ու հարազատները պայթյունի վայրից իրենց հարազատի ենթադրյալ մոխիրը հուղարկավորեցին:

ՋՐՈՒՅՑ

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԽԱԲՎԱԾ

**«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է երգիչ Անդրանիկ Սակավազ-Մանուկյանի հետ, որը պատմել է իր տան մասին եւ նշել մեղավորներին:**



**-12 հարկանի տուն են կառուցում Ձեր տան դիմաց, որի հետեւանքով փլվում է Ձեր կացարանը: Կոնկրետ ու՞մ եք մեղադրում այս ամենի համար:**

-2018 թվականից սկսած՝ մենք այս պատմության մեջ ենք: Ինձ թվաց՝ օրենք կա, եւ գործողություն պետք է անեն, եւ, իհարկե, եթե ուզենան, կանեն: Ինձ թվաց՝ պետք է կանխվի, իհարկե, եթե ուզենան, կկանխվի: Սակայն ես եկա մի այնպիսի եզրահանգման, որ, իհարկե, ամեն ինչ կա՝ պետություն, երկիր ու պետականություն, բայց կան նաեւ անդաստիարակ, սանձարձակ, հանցագործ անձնավորություններ, որոնք գալիս ու գնում են, ու ցավում եմ, որ մեր խեղճուկրակ ժողովուրդը ձանձրացել ու հոգնել է այդ կարգավիճակից ու չգիտի՝ դրանց ելքը ինչպես գտնի, որ ունենա մի գեղեցիկ առաջնորդ կամ առաջնորդներ ու մասնագետներ, որոնք կսիրեն այս ազգը, Աստծո տված այս հողն ու ջուրը եւ նվիրյալների նման զոհաբերություններ կանեն, որ երկիրը շենանա ու ծաղկի, որպեսզի ցանկացած մասնագետ կարողանա ապրել ու աշխատել հանգիստ: Ես ինչու՞ եմ այսպես ասում. շատ տեղեր դիմեցի ու ներկա եղա, ուզեցա տեսնել՝ մարդ կա, թե ոչ: Ամենամեծ հանցագործը քաղաքապետն ու քաղաքպետարանն է: 40 տարի շարունակ ես հողի գույքահարկ եմ վճարել, ես ինքս, ապրելով որպես բարոյական կերպար, պարտք ու պահանջ եմ ունեցել իմ երկրի առջեւ եւ պատասխանատվություն եմ ունեցել, որ ամեն տարի, ամեն ամիս ես կարողանամ մարել իմ պետական այն հոգսերը, որը այս երկրի հարցերն ու խնդիրներն է լուծում: Ամեն տարի ես վճարել եմ այդ բոլորը: Ստացվում է՝ այսօր այնպես է, որ իմ այդ նույն պետությունը 40 տարի ինձնից հողի, գույքի գումար է տարել իմ քրտինքից, բայց պարզվում է՝ ես սխալ եմ արել: Ստացվում է՝ ես այդ հողի ու տան տերը չեմ այսօր, ստացվում է, որ ես իրավունք չունեմ այդ ամենի նկատմամբ:

Ես հիմա չգիտեմ՝ խնդիրն իմ մեջ է, թե պետության: Առաջին հանցագործը պետությունն է: Այսօր ես մեղադրում եմ նախ մեր վարչապետին:

**-Ինչպե՞ս եք պատկերացնում խնդիր լուծումը:**

-Եթե կա կարգ ու կանոն, 1 ժամվա մեջ կլուծվի ու կսահմանափակվի այս հարցը: Եթե չկա, ես այսպես պետք է շարունակ ինչ-որ տեղեր դիմեմ, փողեր ծախսեմ իմ արդարության, իմ ազնվության, իմ սեփական տան խնդիրները լուծելու համար, բայց անիմաստ: Հասկանու՞մ եք, սա օրենք է, որը օրենք են սարքել հենց իշխանությունները, որպեսզի ցանկացած մարդ հիասթափվի եւ ոչ մի տեղ չդիմի: Մարդը պետք է դիմի, չէ՞, այժմ, որ օրենքով ապացուցվի արդարությունը, բայց այդ ընթացքում ծախսում է մեծ գումարներ: Այսօր անտարբերությունն այնքան շատ է, մարդիկ տխուր են, հազիվ մի փոր հաց են ուտում, դրանով ուրախանում: Մարդիկ ի՞նչ անեն: Մի հատ էլ որ կարողանան քեֆ անել ու գոռալ տաշի, դա էնքան լավ է, որովհետեւ պատերազմից հետո մենք շատ ենք կոտրվել: Սա իշխանավորի խնդիրն է: Ես ցավում եմ սրա համար, ողբ եմ ապրում: Իրենք էլ ներկայացնում են միջազգային հարթակներում այն, ինչ իրենց է հարմար:

*Զրուցեց ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵԼ Է



«Արցախում գազամատակարարումը կրկին դադարեցվել է: Վառելիքի պակաս կա»,- երեկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը:

«Արցախում առանձնակի փոփոխություններ չկան, նույնն է՝ պաշարված ծանր վիճակում: Գազամատակարարումը, իբրեւ թե, վերականգնվեց, բայց կրկին դադարեցվել է: Այս ամենը կտտանքների ենթարկելու, ահաբեկելու մի ձեւ է, սա իրենց ոճն է:

Այս ամենը իհարկե ազդում է մեզ վրա կենցաղային հարցերում եւ այլն, բայց սա չէ կարեւորը, սա չէ Արցախին հուզող հարցը. Արցախին հուզում է իր ապագան, հայ ժողովրդի ապագան ու ներկան»:

Հարցին, թե ինչ իրավիճակ է խանութներում, Բաբայանն ասաց, որ սննդամթերքի պակասությունը բավականին մեծ է:

«Խանութներում սննդամթերքի պակասությունը ամեն վայրկյան ավելի է մեծանում, դեղորայքի պակասությունն է շատ զգացվում, վառելիքի, մի խոսքով, վիճակը բավականին ծանր է:

Տրանսպորտն է շատ վատ աշխատում. որքան հնարավոր է եղել, գազ լցրել են, բայց հասկանալի է, որ երկար չի տեւի: Մարդիկ էլ, ինչքան կարողացել, լցրել են, բայց դա մի երկու օր կկարողանան խնայողաբար օգտագործել, չնայած որ հիմնականում պահում են գազը ֆորսմաժորային դեպքերի համար. մեկը լավ չլինի, տանեն հիվանդանոց, եւ այլն. մասսայական չեն քշում»:

Բաբայանը նաեւ նշեց, որ Արցախում դրամաշրջանառությունն էլ է վատացել. մարդիկ կանխիկով չեն կարողանում օգտվել: Բանկոմատներն էլ կա՛մ դատարկ են լինում, կա՛մ էլ ահռելի հերթեր են գոյանում դրանց մոտ:

*ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ*

## ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Մոսկվայի քաղաքային ընտրական հանձնաժողովը գրանցել է Մոսկվայի քաղաքապետի ընտրությունների առաջին թեկնածուին:

Առաջին գրանցված թեկնածուն դարձել է Սերգեյ Սոբյանինը: Համապատասխան որոշումն ընդունվել է երկուշաբթի հանձնաժողովի նիստում. այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՏԱՍՍ-ից:

Պոտենցիալ թեկնածուների փաստաթղթերի ընդունումը գրանցման համար ավարտվել է հուլիսի 7-ին, պատգամավորների ստորագրություններն իրենց աջակցության համար ներկայացրել են հինգ հոգի՝ Դմիտրի Գուսեւը, Վլադիսլավ Դավանկովը, Լեոնիդ Զյուգանովը, Սերգեյ Սոբյանինը, Բորիս Չեռնիշովը:

## ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵ՞Լ ԵՆ



Օրեր առաջ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ Երեւանի վարչական շրջաններից մեկում աշխատակից է ազատվել աշխատանքից միայն նրա համար, որ վերջինս մոտեցել է «Հայաքվե»-ի սեղանին զուտ հետաքրքրվելու համար: Այդ քաղաքացին հրաժարվել է խոսել այդ մասին, որովհետեւ իր թոռը եւս աշխատում է թաղապետարանում, եւ վախենում են, որ իրեն էլ կազատեն աշխատանքից: Վարչական շրջանում տեղի ունեցածը փորձ է արվում ամեն կերպ թաքցնել: «Ժողովուրդ» օրաթերթի ստացած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ դեպքը, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցեց նաեւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Արման Բարխուդարյանի հետ, որը հերքեց տեղեկությունը. «Բացառում եմ նման դեպք: Չեմ ասում՝ չի եղել նման բան, այլ բացառում եմ անգամ հետագայի համար: Աշխատակիցը աշխատանքից հեռացվում է իր կատարած վատ աշխատանքի համար»:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ հրահանգ է իջեցված Երեւանի վարչական շրջանների ղեկավարներին, ղեկավարներից էլ՝ աշխատողներին, որ եթե մասնակից լինեն «Հայաքվե»-ին, ապա խնդիրներ կունենան՝ աշխատանքի հետ կապված:

*Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐ՝ ԱՄՆ-Ի ՀԵՏ

Հուլիսի 10-ին Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է ԱՄՆ Առեւտրի դեպարտամենտի արտահանման կառավարման գծով քարտուղարի օգնական Թեա Քենդլերին:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ առեւտրատնտեսական կապերի ընդլայնման եւ խորացման, փոխգործակցության խթանման ու ամրապնդման հնարավորությունների շուրջ, մասնավորապես՝ երկկողմ առեւտրային ներդրումների, գործարար միջավայրի բարելավման համատեքստում:

Կողմերը քննարկել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

## ԸՆԴԴԵՄ ՀՈԽԻԿՅԱՆԻ



«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ էր ստացել, որ Մարտունի քաղաքում ծեծի է ենթարկվել Մարտունի քաղաքում «Հայաքվե» նախաձեռնության համակարգող Նաիրի Հոխիկյանը:

Մենք զրուցեցինք Նաիրի Հոխիկյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ է տեղի ունեցել: Նրա պարզաբանմամբ՝ իրեն չեն ծեծել, այլ սադրել են:

«Իրավիճակն ինձ հետ կապ չի ունեցել, կապ է ունեցել կոնկրետ «Հայաքվե» նախաձեռնության հետ: Մարտունի քաղաքում արդեն երրորդ օրն է՝ իրականացվում է ստորագրահավաք: Այսօր՝ վաղ առավոտից՝ սկսելուց անմիջապես հետո, սկսեցին մարդիկ մոտենալ հստակ ուղղորդված, ագրեսիվ տոնով, գոռգոռալով: Մեզ մեղադրում էին տարբեր բաների մեջ, այդ թվում՝ իբրեւ սա Արցախի հետ կապ չունի: Ստորագրողներին ասում էին՝ ձեզ խաբում են, սա նախկինների օգտին է: Միջամտելուց հետո սկսվեց քաշքշուք, բայց ծեծկռտուք չի եղել, պարզապես սադրել են: Փորձում էին ստորագրված թերթիկներից վերցնեին, թույլ չտվեցի, սակայն մի քանի տեղեկատվական թերթիկ պատռեցին»,- ասաց Հոխիկյանը:

Իրավիճակը ավելի չլարելու համար Հոխիկյանը զանգահարել է ոստիկանություն, որից հետո պարզել են միջադեպի մասնակիցների ինքնությունները, ապա կազմվել համապատասխան արձանագրություն:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

## ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆ

ԱԺ-ն այսօր՝ հուլիսի 11-ին, արտահերթ նստաշրջան կիրավիրի:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԺ արտահերթ նիստերը պետք է արդեն երեկ՝ հուլիսի 10-ին մեկնարկեին, սակայն տեղեկացանք, որ արտահերթ նստաշրջան հրավիրելու համար անհրաժեշտ 27 ստորագրություն չի հավաքվել, ինչի հետեւանքով նիստերը հետաձգվել են:

ԱԺ արտահերթ նստաշրջանը կմեկնարկի հուլիսի 11-ից:

ՆԱԽԱԳԻԾ

# ԿԿԱՍԵՑՎԵ՞Ն ԼԻԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ քարտուղար Արթուր Հովհաննիսյանը շրջանառության մեջ են դրել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ ԱԺ նախագիծ:**



Նախագծի հիմնական զեկուցողը լինելու է Հովիկ Աղազարյանը:

ԱԺ նախագիծն արդեն տեղադրվել է ԱԺ կայքում:

Նշենք, որ այդ նախագծի մասին առաջին անգամ խոսել էր ՔՊ-ական Հովիկ Աղազարյանը: Նախագիծը ՔՊ խմբակցությունը ներկայացրել է այն բանի համար, որ ԱԺ ՄԻՊ հանձնաժողովում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ընտրության օրը Թագուհի Թովմասյանը չի արգելել ՄԻՊ թեկնածու Էդգար Ղազարյանին «ադրբեջանաթուրքական» հեղափոխության մասին խոսել, բայց թե ինչպես պետք է արգելեր, հայտնի չէ:

Հիշեցնենք, որ ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն ապրիլի 4-ի նիստին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ դիմում էր ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին:

Նշենք, որ իր դիմումի մեջ պատգամավորը նշում էր. ««Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը պետք է օրենքով կրի իր բաժին պատիժը, քանի որ նա իր պահվածքով եւ գործունեությամբ խախտեց ՀՀ օրենսդրությունը: Այդ օրը Արթուր Հովհաննիսյանի կողմից խախտվեց ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք (...)», «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 3-րդ հոդվածի շատ կետեր, մասնավորապես՝ «դրսեւորել պատգամավորին հարիր վարքագիծ», «պահպանել ԱԺ հանձնաժողովի նիստերի անցկացման կարգը», «ՀԱՐԳԱԼԻՑ վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ»:

Վնաս հասցվեցին նաեւ ՀՀ քրեական օրենսգրքով պաշտպանվող իրավահարաբերություններին, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 194-րդ հոդվածով սահմանված, երբ ինչեց մարդու առողջությանը վնաս պատճառելու սպառնալիք՝ պայմանավորված ՄԻՊ թեկնածուի հայացքներով ((...) լեզուդ կկտրեմ, ականջներդ կկտրեմ եւ այլն), ոտնահարվեցին ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածով պաշտպանող՝ անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները՝ օգտագործելով իշխանական լիազորությունները, եւ վերջապես ակնհայտ դրսեւորվեց նույն օրենսգրքի 297-րդ հոդվածով նախատեսված խուլիգանություն»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԱՋԱՓՆՅԱԿԻ ԿԱՅԱՆԸ՝ ՇՈՒՏՈՎ

Աջափնյակի մետրոյի նախագծի 2-րդ փուլն ավարտված է, այս պահին աշխատանքներ են իրականացվում երրորդ փուլի ուղղությամբ, մինչեւ տարեվերջ նախագիծը կդրվի մրցույթի:

Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական արտահերթ նիստի ժամանակ այս մասին հայտարարեց փոխքաղաքապետ Ստեփան Մաչյանը՝ ընդգծելով, որ Երեւանի մետրոպոլիտենի «Աջափնյակ» կայարանի նախագծման աշխատանքներն իրականացնում են երեք փուլով:

«Ապրիլին ավարտել ենք առաջին փուլը, երկրորդ փուլի ավարտի ժամկետը հուլիսի 10-ն էր, մենք անցած շաբաթվա ընթացքում կազմակերպության կողմից ստացել ենք երկրորդ փուլի ամբողջական փաթեթը կատարված: Այս պահին աշխատանքներ են իրականացվում երրորդ փուլի ուղղությամբ. մենք նախատեսում ենք աշխատանքներն ամբողջությամբ ավարտել տարվա վերջին՝ ժամկետից մի փոքր շուտ»,-ասաց նա:

Փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանն էլ հավելեց՝ վստահ է, որ մինչեւ տարեվերջ նախագիծն ամբողջական ունենալու են:



Հարցը քննարկվել է քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում:

Նշվում է, որ առավոտյան եւ երեկոյան ժամերին հավելյալ գիծ կավելացվի:

## ԴԱՐՁԱՓՈԽԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

Մյասնիկյան պողոտայում խցանումները մեղմելու նպատակով դիտարկվում է դարձափոխային երթեւեկություն կազմակերպել:

## ԱՅՑ՝ ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ

Հունիսի վերջին եւ հուլիսի սկզբին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) աշխատակիցները կրկին այցելել են Ադրբեջանում կալանավորված հայ ռազմագերիներին, այլ պահվող անձանց, այդ թվում՝ նաեւ վերջերս ձերբակալված 2 զինծառայողներին:

ԿԽՄԿ հայաստանյան գրասենյակի հաղորդակցման եւ կանխարգելման ծրագրերի ղեկավար Զառա Ամատունին նշել է, որ հայ ռազմագերիների հետ անհատական հանդիպումներ են տեղի ունեցել, նրանց հնարավորություն է տրվել շփվել ընտանիքների հետ:

«Իր մանդատի համաձայն՝ ԿԽՄԿ-ն իր այցերի ընթացքում գնահատում է գերիների նկատմամբ վերաբերմունքը եւ պահման պայմանները, ինչպես նաեւ նպաստում է նրանց ընտանիքների հետ շփումների վերականգնմանը կամ շարունակմանը»,- նշեց Ամատունին:

## ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶՈՒՄ Է

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը հուլիսի 10-ին աշխատանքային այցով մեկնել է Փարիզ. այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ԱԺ հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչությունից:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ԸՆԴԴԵՄ ԱՐՑԱԽԻ

**2023 թվականի հուլիսի 3-10-ն ընկած ժամանակահատվածում ոստիկանության կենտրոնական ու տարածքային ստորաբաժանումների հերթապահ մասերում հանցագործությունների եւ իրավախախտումների վերաբերյալ գրանցվել է 36 հաղորդում, որոնցից 21-ը հանցագործությունների մասին է: Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում դրանցից 18-ն արդեն բացահայտվել եւ քննության փուլում է. այդ մասին տեղեկացնում են ԼՂ ՆԳՆ ոստիկանությունից:**



«Քրեական հետախուզության վարչության եւ տարածքային ստորաբաժանումների ծառայողների համատեղ իրականացված հետախուզական միջոցառումների արդյունքում շաբաթվա ընթացքում բացահայտվել է թմրանյութի ապօրինի շրջանառության, աճեցման եւ իրացման շուրջ 12 դեպք: Դրան նպաստել է «Կանեփ-կակաչ 2023» համալիր միջոցառումը:

Բացահայտվել են հերթապահ մասում գրանցված վիճաբանությունների եւ դրանց հետեւանքով միմյանց մարմնական վնասվածք հասցնելու բոլոր 4 դեպքերը: Հասարակական կարգը կոպիտ խախտած անձինք բերման են ենթարկվել ոստիկանություն:

Յոթ օրվա ընթացքում բացահայտվել են նաեւ գույքի դիտավորությամբ ոչնչացման եւ խարդախության մեկական դեպքեր: ՆԳ նախարարությունը միջոցներ է ձեռնարկում անբացահայտ մնացած մյուս հանցագործությունների, այդ թվում՝ նշված ժամանակահատվածում գրանցված խուլիգանություն բնութագրմամբ մեկ դեպքի բացահայտման ուղղությամբ:

Ադրբեջանական կողմը 2 անգամ կոպտորեն խախտել է հրադադարի պահպանման ռեժիմը, թիրախավորել եւ կրակել է քաղաքացիական անձանց ու բնակավայրերի ուղղությամբ:

Հուլիսի 7-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Մարտակերտի շրջանում: Աղաբեկալանջ գյուղի բնակչուհին ոստիկանություն է դիմել, որ իր երկու անչափահաս երեխաներին թողել է տանը առանց հսկողության, եւ ինքը աշխատանքի բերումով մեկնել Մարտակերտ քաղաք:

Ոստիկանության եւ փրկարար ծառայողների համատեղ որոնողական աշխատանքների արդյունքում հուլիսի 8-ին երեխաները հայտնաբերվել են Մարտակերտ քաղաքում՝ ավտոմեքենայի մեջ, մահացած վիճակում:

Նախնական տվյալներով մահվան պատճառ է հանդիսացել մեքենայում բարձր ջերմաստիճանը: Ստուգմամբ զբաղվում է քննչական կոմիտեն:

Հուլիսի 6-ին եւ 7-ին ադրբեջանական կողմը Մարտունու շրջանում խախտել է հրադադարի պահպանման ռեժիմը, կրակ բացելով Բերդաշեն գյուղի վարչական տարածքում արտեզյան ջրհորի նորոգման աշխատանքներ կատարող քաղաքացիական 3 անձի ուղղությամբ: Իսկ հուլիսի 7-ին ժամը 19:00-ի սահմաններում, ադրբեջանական դիրքերից կիրառելով 60մմ տրամաչափի ականանետ՝ դիտավորությամբ փորձել են հրկիզել Մաճկալաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող ցորենի դաշտերը:

Բարեբախտաբար, ոչ ոք չի տուժել: Հաղորդումը փոխանցվել է ռուսական խաղաղապահ զորակազմին:

Հուլիսի 3-10-ն ընկած ժամանակահատվածում ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է 8 արձանագրություն: Տեղի է ունեցել ՃՏ 2 պատահար, որից մեկը մարմնական վնասով: Պատահարներից 1 անձ դիմել է բուժհաստատություն: Առանց վարորդական վկայականի տրանսպորտային միջոց է շահագործել 2 վարորդ:

ՆԳ նախարարության ոստիկանության բոլոր ստորաբաժանումներն ԼՂ տարածքում շարունակում են իրականացնել շուրջօրյա կազմակերպված աշխատանք, վերահսկելով օպերատիվ իրավիճակը՝ պահպանելով կայուն հասարակական կարգ ու կանոն»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՓԱՍՏ

# ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐՆ ՈՒ ՏՈՒԳԱՆՔԸ



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ վարժական հավաքներից խուսափողները դատարանում են. նրանց մասով վճիռներ են կայացվում:

Եվ այսպես, Ռադիկ Սարուխանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված կրտսեր ենթասպայական կազմի պահեստազորային, պարտավոր լինելով մասնակցել ՀՀ կառավարության՝ 23.06.2022 թվականի թիվ 941-Ն որոշմամբ հայտարարված՝ 2022 թվականի օգոստոսի 01-ից մինչեւ հոկտեմբերի 30-ն անցկացվող եռամսյա վարժական հավաքին, 24.06.2022 թվականին ստացել է ծանուցագիրը եւ բուժզննման ուղեգիրը, որից հետո ճանաչվելով պիտանի վարժական հավաքների համար՝ վարժական հավաքների մեկնելու օրը՝ 2022 թվականի օգոստոսի 01-ին, չի ներկայացել ՀՀ ՊՆ Զ եւ ԶՀԾ Լոռու մարզի տարածքային ստորաբաժանում եւ չի մեկնել վարժական հավաքների՝ այդկերպ խուսափելով եռամսյա վարժական հավաքին մասնակցելուց:

Ռադիկ Սարուխանյանին մեղավոր են ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման համար, եւ նրա նկատմամբ պատիժ են նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի յոթապատիկի՝476.000 (չորս հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամի չափով:

Մեղադրյալ Ռադիկ Աշոտի Սարուխանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողել են անփոփոխ մինչեւ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԻՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Ռուստամ Շավալյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 11.06.2023թ.-ի ժամը 18:00 ի սահմաններում Երեւան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի «Սուրբ Աննա» եկեղեցու մոտակայքում ֆիզիկական ներգործություն է կատարել Լիլիթ Մ.-ի նկատմամբ, քաշելով հանել ակնոցները, տաք սուրճը լցրել վերջինիս մազերին եւ երկու անգամ հարվածել վերջինիս շրթունքի եւ դեմքի շրջանում:

*Ք. Մ.*

ԽՈՒԶԱՐԿՈՒՄ

# ՆՌՆԱԿ ԵՎ ԻՆՔՆԱՁԻԳ՝ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

**Գեւորգ Գեւորգյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա,**

չունենալով «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված հրազենի, ռազմամթերքի շրջանառություն իրականացնելու, այն ձեռք բերելու եւ պահելու իրավունք, ինչպես նաեւ հրազենի եւ ռազմամթերքի շրջնառություն իրականացնելու՝ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում օրենքով սահմանված կարգով ձեւակերպված համապատասխան թույլտվություն, դեռեւս քննությամբ չպարզված ժամանակահատվածում եւ հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել եւ Երեւան քաղաքի Նուբարաշեն 6-րդ փողոցի 150-րդ շենքի 21-րդ բնակարանի միջանցքի պահարանում, Երեւան քաղաքի Ռադիշչեւի փողոցի 19-րդ հասցեում գործող «Վան» ռեստորանային համալիրի հանգստյան սենյակում պահել է ակոսափող հրազեն հանդիսացող՝ նախկին ԽՍՀՄ 1976 թվականի գործարանային արտադրության «AKM» տեսակի, «303576» համարի, 7,62մմ /7,62x39/ տրամաչափի ակոսափող ինքնաձիգ, ռազմամթերք հանդիսացող, գործարանային արտադրության, 62մմ /7,62x26/ տրամաչափի թվով 9 հատ փամփուշտներ, ռազմամթերք հանդիսացող, գործարանային արտադրության, 5,6մմ /5,6x15,6/ տրամաչափի օղակավոր բոցավառման-զորտային-որսորդական թվով 38 հատ փամփուշտներ, ռազմամթերք հանդիսացող թվով 31 հատ փամփուշտներ, որից թվով 27 հատը հանդիսանում են գործարանային արտադրության, 9մմ 19/ տրամաչափի փամփուշտներ, թվով 2 հատը հանդիսանում են գործարանային արտադրության, 7,62մմ /7,62x25/ տրամաչափի փամփուշտներ, թվով 2 հատը հանդիսանում են գործարանային արտադրության, 6,35մմ /6,35x15/ տրամաչափի փամփուշտներ, ռազմամթերք հանդիսացող թվով 151 հատ գործարանային արտադրության, 7,62մմ/7,62x39/ տրամաչափի փամփուշտներ, ռազմամթերք հանդիսացող թվով 2 հատ փամփուշտներ, որոնցից թվով 1 հատ՝ 7,62մմ 2x25/ տրամաչափի, եւ թվով 1 հատ՝ 32 S&W LONG /7,62x23/ տրամաչափի, ռազմամթերք հանդիսացող, գործարանային արտադրության, «Y3PFM» տեսակի, «Ф1» տեսակի ձեռքի բեկորային մարտական նռնակ եւ մարտական պայթուցիչ՝ նախատեսված «Ф-1», «РГ42» եւ «Ргд-5» տեսակի շի բեկորային մարտական նռնակների համար, որոնք հայտնաբերվել եւ վերցվել են 2022 թվականի հոկտեմբերի 18-ին Երեւան քաղաքի Նուբարաշեն 6-րդ փողոցի 150-րդ շենքի 21-րդ բնակարանի եւ Երեւան քաղաքի Ռադիշչեւի փողոցի 19-րդ հասցեում գործող «Վան» ռեստորանային համալիրի խուզարկությամբ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 7-ից 10-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 170 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՀԱՏԱԿԱԳԻԾԸ՝ ԽՆԴԻՐ

Ենոքավանը Նիկոլ Փաշինյանի հոր՝Վովա Փաշինյանի ծննդավայրն է: Նիկոլ Փաշինյանը իր ընկերների, ընտանիքի անդամների հետ հաճախ հանգստանում, քեֆ է անում Ենոքավանում: Օդից կախված լուրերի համաձայն՝ Ենոքավանի ամենահայտնի հանգստյան օբյեկտներից մեկը փաստացի պատկանում է հանրահայտ Պատրոն Դավոյին՝ Դավիթ Գալստյանին: Թե Նիկոլ Փաշինյանի իշխանության համար ինչքան կարեւոր է Ենոքավանի կառուցապատումը, ցույց է տալիս Տավուշի մարզպետարանի տարածած հետեւյալ տեղեկատվությունը: Հուլիսի 7-ին Տավուշի մարզպետի աշխատակազմում տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել է Ենոքավանի գլխավոր հատակագիծը: Խորհրդակցությունը վարել է մարզպետ Հայկ Ղալումյանը, քննարկմանը մասնակցել են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը, կոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը, մարզպետի տեղակալ Նարեկ Ղուշչյանը, Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը, Ենոքավանի վարչական ղեկավար Անդրանիկ Չիբուխչյանը, ոլորտի այլ պատասխանատուներ: Հանդիպմանը քննարկում է ծավալվել Ենոքավան բնակավայրի միկրոռեգիոնալ տարածական պլանավորման զարգացման փաստաթղթի մշակման աշխատանքների շուրջ: Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը կարեւորել է նման հանդիպումը՝ բարձրացված հարցերը քննարկելու եւ նախագծում հաստատելու տեսանկյունից: Խորհրդակցության ընթացքում առաջարկվել է Ենոքավան բնակավայրի քաղաքաշինական բոլոր խնդրահարույց հարցերը քննարկել նախագծողի հետ եւ դրանք արտահայտել նոր մշակվող փաստաթղթում:

## ՄԵԾ ԱՂՄՈՒԿ, ՔԻՉ ԳՈՐԾ

2023թ. ապրիլի 29-ին Նոյեմբերյան համայքի սահմանամերձ Դովեղ գյուղի մոդուլային, 140 աշակերտի համար նախատեսված դպրոցի շինհրապարակ այցելած վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դովեղի բնակիչներին հայտնել է, որ գոյություն ունի սահմանամերձ գյուղերի երիտասարդ ընտանիքների համար պետական աջակցությամբ 16 միլիոն դրամ վարկավորմամբ տներ կառուցելու ծրագիր, որի դեպքում վարկի մայր գումարը եւ վարկի տոկոսները փակում է պետությունը: Նիկոլ Փաշինյանը հարցրել է, թե արդյոք դովեղցիները տեղյակ են այդ ծրագրից, որպեսզի օգտվեն: Անցել է գրեթե երեք ամիս. ինչպե՞ս է այդ ծրագրի ընթացքը: Հուլիսի 6-ին կառավարության նիստում Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը հայտնել է, որ մարզում շուրջ 100 շահառու բանկերի ու վարկային կազմակերպությունների միջոցով ծանոթացել են այդ ծրագրի վարկավորման պայմաններին, սակայն տրամադրվել են 3 վարկերի 1-ին տրանշները Ոսկեպար, Արծվաբերդ եւ Բերքաբեր գյուղերում, վարկառուները պատրաստվում են դիմել երկրորդ փուլին: Մարզպետ Ղալումյանը հավելել է, որ եւս 3 վարկ էլ հաստատվել է՝2-ը՝Բերքաբերում, 1-ը՝ Կիրանցում: Իսկ Դովեղի մոդուլային դպրոցի շինարարությունը, որի ընթացքին Նիկոլ Փաշինյանը ապրիլի 29-ին ծանոթացել եւ հորդորել էր շինաշխատանքները ըստ ժամանակացույցի կատարել, արդեն 15 օր դադարեցված է, քանզի կատարված աշխատանքների դիմաց պետական բյուջեից ֆինանսավորում չի կատարվել:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

# ԼԱՎԱԳՈՒՅՆ ՑՈՒՑԱՆԻՇՆ ԱՅՍ ՏԱՐՎԱՆՆ Է

**Այս տարվա առաջին 6 ամսվա ընթացքում արդեն ունենք 1 մլն զբոսաշրջիկ, որը մինչեւ հիմա եղած թվերից ամենալավն է. այս մասին նշել է Զբոսաշրջության կոմիտեի նախագահ Սիսիան Պողոսեանը:**



«Երբ համեմատում ենք 2019-ի առաջին 6 ամսվա հետ, որը ոլորտի համար եղել է ամենալավ տարին, այս տարի արդեն 30 տոկոս աճ ենք գրանցել:

Մենք 2019-ի փակել ենք 1,9 մլն զբոսաշրջիկով, եւ եթե այսպես շարունակենք այս տարի, հույս ունեմ, որ 2 մլն-ը կգերազանցենք եւ ավելի լավ թվեր կունենանք այս տարի»,-ասաց նա:

Խոսելով զբոսաշրջության ոլորտում նման թվեր արձանագրելու պատճառների մասին՝ Սիսիան Պօղոսեանն ասաց. «Առաջին հերթին մենք բավականին խիստ աշխատում ենք Հայաստանի բրենդը ներկայացնել միջազգային շուկայում, որն ավելի ճանաչելի դառնա: Ունենք շատ հետաքրքիր արշավներ մեր թիրախային շուկաներում, թիրախային երկրներում: Շատ պարբերականներում շատ հետաքրքիր նյութեր են գրվում Հայաստանի մասին: Աշխատում ենք տարբեր ավիաընկերությունների հետ՝ «Վիզէյր», «ՖլայԱռնա», շուտով նաեւ «ԷյրՖրանս»-ի հետ, նաեւ «Էյր Բալթիկի» հետ: Մասնակցում ենք տարբեր միջազգային ցուցահանդեսների, շուտով պետք է գնանք Փարիզ եւ Հայաստանը ներկայացնենք որպես գրավիչ ուղղություն: Բացի այդ, այս պահին շատ ակտիվ ճանաչողական այցեր ենք կազմակերպում հենց այդ թիրախային երկրներից: Այսօր Իտալիայից 8-հոգանոց խումբ ենք հրավիրել՝ թե՛ բլոգերներ, թե՛ մեդիայի ներկայացուցիչներ: Իրենք բացահայտում են Հայաստանը եւ գովազդում մեր երկիրը Իտալիայում, մանավանդ արդեն ունենք ուղիղ թռիչքներ Իտալիայի երեք քաղաքներից՝ Հռոմից, Վենեցիայից եւ Միլանից»:

Պօղոսյանի խոսքով՝ Հայաստան եկող զբոսաշրջիկներից 52 տոկոսը ՌԴ-ից են, ապա Վրաստանից ու Իրանից. «Այս երեք երկրները միշտ եղել են առաջին երեք տեղերում: Մենք նաեւ ակտիվացնում ենք եվրոպական երկրները՝ Ֆրանսիա, Գերմանիա, Դուբայում արդեն բավականին հետաքրքիր արշավներ ունենք եւ արդյունքը տեսնում ենք: Դուբայից դեպի Հայաստան մեծ հոսք կա»:

Պատասխանելով հարցին, թե ինչ է անում կոմիտեն որոշ երկրների ուղղություններով, որոնք հայտարարել են, թե Հայաստանը անվտանգ չէ զբոսաշրջության համար, Սիսիան Պողոսեանն ասաց, որ ԱԳ նախարարության եւ դեսպանատների հետ աշխատում են այդ ուղղությամբ եւ կարողացել են ապահովել, որ Գերմանիայի կառավարությունը նման հորդորը հեռացնի պաշտոնական կայքերից, բայց այլ երկրներում դեռ խնդիր կա:

ՏՎՅԱԼՆԵՐ

## Ո՞Վ Է ՄԵՂԱՎՈՐ

Արդեն շուրջ 200 օր է՝ ադրբեջանցիները արգելափակել են Արցախը Հայաստանի հետ կապող միակ ավտոճանապարհը, այդ պատճառով Արցախում ստեղծվել է հումանիտար ճգնաժամ, եւ նույնիսկ հումանիտար բեռներ հնարավոր չէ ուղարկել Արցախ:

Այն հարցին, թե ովքեր են մեղավոր այս իրավիճակում, հարցված քաղաքացիների 27,8%-ը մեղադրում է Ադրբեջանին, մինչդեռ ամիսներ առաջ նույն մարդկանց 42,5%-ն էր կարծում, որ կատարվածի մեղավորը մեր հարեւան, սակայն ոչ բարեկամ երկիրն է:

Ռուսաստանի իշխանություններին հունվարին մեղադրում էին հարցվածների 30,2%-ը՝ներկայիս 25,2%-ի համեմատ: Դե իսկ ստեղծված իրավիճակում, ըստ քաղաքացիների, վերը նշված երկրի կողմից ուղարկված խաղաղապահների մեղավորության ցուցանիշը եւս նվազել է. նախկին 10,2% մեղադրողների փոխարեն՝ այսօր մեղադրում են հարցվածների 9,4%-ը:

Պատկերն այլ է Հայաստանի դեպքում: Եթե մնացած դեպքերում մեղադրանքները «քչացել են», այս դեպքում հակառակն է: Քաղաքացիների 29,0%-ը հունվարին մեղադրում էր հայկական իշխանությանը, այսօր՝35,0%-ը:

Մեծացել է նաեւ այն մարդկանց քանակը, որոնք դժվարանում են պատասխանել՝ նախկին 4,5%-ի փոխարեն՝11,2 %:

*ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ*

## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի դեկտեմբերի 20-ին: Նա 2022 թվականի հայտարարատու տարում հայտարարագրել է մեկ անշարժ գույք՝ այգետնակ-ամառանոց Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, որը ձեռք է բերել 2015 թվականին:

Նախարարը հայտարարագրել է 2 TOYOTA մակնիշի մարդատար մեքենա, որոնցից մեկը ձեռք է բերել 2019 թվականին, մյուսը՝2015-ին: Հայտարարագրել է նաեւ 1 TRANSALP V600 PD06 մոտոցիկլ, որը ձեռք է բերել 2012 թվականին: Նախարարը մեկ մեքենա՝ TOYOTA մակնիշի, 2006 թվականի արտադրության, որը ձեռք էր բերել 2023 թվականին, տարվա ընթացքում օտարել է 2 մլն 500 հազար դրամով, սակայն ում՝ Հովհաննիսյանը չի հիշում:

Հովհաննիսյանի բաժնային արժեթղթերը տարեվերջին կազմել են 1մլն 050 հազար դոլար: Հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 87 մլն 994 հազար դրամ եւ 27 հազար դոլար: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 5 հազար 995 դոլար եւ 3 մլն 231 հազար դրամ: Նա հայտարարագրել է նաեւ կրիպտոարժույթ, որի չափը նշված չէ:

Հովհաննիսյանը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 16 մլն 949 հազար դրամ աշխատանքի վարձատրություն: Հանգստի համար կատարած ճանապարհածախսերը եւ կեցության ծախսերը կազմել են 4 մլն 779 հազար դրամ: Ուսման կամ այլ դասընթացների համար վճարվող վարձավճարը կազմել է 3 մլն 147 հազար դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 0 դրամ, սակայն փոխառության մնացորդի չափը՝ 393 մլն 570 հազար դրամ է, որը, ամենայն հավանականությամբ, Երեւանի Կենտրոն վարչական շրջանում հիպոտեկով ձեռք բերված բնակարանի գումարն է: Նախարարը «Կարիտաս Իտալիանա» ՍՊԸ-ում ունի 100% բաժնեմաս: Հիշեցնենք, որ Հովհաննիսյանի դուստրը սովորում է Պրահայի ճարտարապետական համալսարանում (ARCHIP): Նշենք, որ Հովհաննիսյանը ամուսնացած է եւ ունի 5 երեխա:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 41 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 60-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

**Team Telecom**

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հուլիսի 9-16-ը կկայանա Երեւանի «Ոսկե ծիրան» հոբելյանական 20-րդ միջազգային կինոփառատոնը, որի շրջանակում Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր՝ իրենց փորձն ու արվեստը ներկայացնելու կինոսերներին:

Այս տարի փառատոնի իրականացմանը միացել է նաեւ «Թիմ» ընկերությունների խումբը՝ որպես գլխավոր հովանավոր: Ընկերությունների խմբում ընդգրկված «Գրանդ Հոթել Երեւանը» մշտապես երկրում տեղի ունեցող կարեւորագույն մշակութային իրադարձությունների կենտրոնում է: Համագործակցության սկիզբից ի վեր «Գրանդ Հոթել Երեւանը» տուն է դարձել փառատոնի ընթացքում տեղի ունեցող բոլոր կարեւոր իրադարձությունների եւ միջոցառումների համար:

1935 թվականին «Երեւան» հյուրանոցում՝ կինոբեմադրիչ Համո Բեկնազարյանի սենյակում հատուկ տեղադրված դաշնամուրի վրա Արամ Խաչատրյանը ստեղծել է հայկական առաջին հնչյունային ֆիլմի՝ «Պեպոյի» երաժշտությունը: Տարիներ անց 20-րդ դարի կինեմատոգրաֆիայի լեգենդ Սերգեյ Փարաջանովը այստեղ է մշակել իր նշանավոր «Նռան գույնը» ֆիլմի դրվագները:

«Ուրախ ենք, որ «Թիմ» ընկերությունների խումբը՝ ի դեմս «Գրանդ Հոթել Երեւան» հյուրանոցի, այս տարվա փառատոնի գլխավոր հովանավորներից է: Շնորհակալ ենք աջակցության համար եւ երախտապարտ ենք, որ «Թիմ» ընկերությունների խումբը փառատոնի ու հայ կինոյի կողքին են եւ իրենց աջակցությամբ նաեւ նպաստում են ոլորտի զարգացմանն ու առաջխաղացմանը: Ուրախ ենք նաեւ, որ «Թիմ» ընկերությունների խումբը եւս կիսում է փառատոնի առաքելությունը:

Հուսով ենք, որ մեր համատեղ արգասաբեր համագործակցությունը շարունակական բնույթ կկրի՝ էլ ավելի ամրապնդվելով»,- նշում է «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանը:

Կինոփառատոնի բացումը կազդարարվի ռեժիսոր Ջեսիկա Վուդվորթի «Լուկա» (Բելգիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Բուլղարիա, Հայաստան) ֆիլմով, որի պրեմիերան կայացել է Ռոտերդամի փառատոնում, իսկ փակմանը կցուցադրվի կանադահայ ռեժիսոր Ատոմ Էգոյանի «Օրացույցը» ֆիլմի նոր գունաշտկված տարբերակը՝ ֆիլմի ստեղծման 30-ամյակի առթիվ:

Փառատոնի պատվավոր հյուրերից են Կաննի կինոփառատոնի «Ոսկե արմավենու» ճյուղի կրկնակի դափնեկիրներ Դարդեն եղբայրները, ինչպես նաեւ Լոկառնոյի կինոփառատոնի «Ոսկե հովազի» դափնեկիր, պորտուգալացի ռեժիսոր Պետրո Կոշտան, որը փառատոնի ընթացքում կանցկացնի հատուկ աշխատարան «Կորիզ» կարճամետրաժ մրցութային ծրագրի ֆիլմերի հեղինակների հետ:

Նշենք նաեւ, որ այս տարի նշվում է նաեւ հայ կինոյի 100-ամյակը, որին նվիրված կա առանձնացված հատուկ ծրագիր:

ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

# ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

**Հուլիսի 1-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված Առնո Բաբաջանյանի անվան պատանի եւ երիտասարդ դաշնակահարների 7-րդ միջազգային մրցույթ-փառատոնի մրցանակաբաշխությունը եւ գալա-համերգը՝ լավագույն դափնեկիրների մասնակցությամբ:**



Դափնեկիրներին մրցանակները հանձնեց հեղինակավոր միջազգային ժյուրին, որի կազմում էին ճանաչված երաժիշտներ, պրոֆեսորներ, միջազգային մրցույթների դափնեկիրներ Սերգեյ Սարաջյանը (Հայաստան), Ալեքսանդր Գարբերը (Վրաստան), Լեվ Ֆրանկը (Ռուսաստան), Վաղարշակ Հարությունյանը (Հայաստան), Գայանե Հախնազարյանը (Հայաստան-Ռուսաստան), Հայկ Մելիքյանը (Հայաստան), Արուս Աճեմյանը (Հայաստան), Սոնա Բարսեղյանը (Հայաստան) եւ Արմեն-Լեւոն Մանասերյանը (Հայաստան-Գերմանիա):

Մրցույթ-փառատոնի հանդիսավոր փակմանը ներկա էր հայ մեծանուն կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանի թոռնուհի Պոլինա Բաբաջանյանը որդու՝ կրտսեր Առնոյի հետ: Պոլինա Բաբաջանյանը Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի տնօրեն, մրցույթ-փառատոնի գեղարվեստական նախագահ, ԵՊԿ պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր մանկավարժ Արմեն Հարությունյանին պարգեւատրեց Առնո Բաբաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի հուշամեդալով:

Պատվավոր հյուրերի շարքում էր նաեւ մրցույթ-փառատոնի երակարամյա աջակից «Էմիլ Գրիգորյանի անվան Երեւանի ոսկերչական գործարան»-ի հիմնադիր երջանկահիշատակ Էմիլ Գրիգորյանի դուստր Սոնա Գրիգորյանը, որն անձամբ հանձնեց Առնո Բաբաջանյանի կիսադեմով ոսկե հուշամեդալներից մեկը, որով, համաձայն ձեւավորված ավանդույթի, պարգեւատրվում են առաջին կարգի դափնեկիրները:

Մրցույթ-փառատոնի երեք տարիքային խմբերի դափնեկիրները, բացի սահմանված դրամական մրցանակներից, ստացան իրենց դիպլոմները, հովանավորների կողմից սահմանված նվերները, հատուկ մրցանակները, որոնց թվում էին երկու դափնեկրի համար հեղինակավոր իսպանական KNS ձlassiձal ձայնագրման ստուդիայում ձայնագրման հնարավորություն, չորս մասնակցի համար սահմանված Բրյուսելում համերգային ելույթ ունենալու հնարավորություն, Երեւանի Առնո Բաբաջանյանի անվան պետական երաժշտամանկավարժական քոլեջի կողմից «Առնո Բաբաջանյանի ստեղծագործության լավագույն կատարման համար» սահմանված դրամական մրցանակ, «Կամերտոն» մշակութային հասարակական կազմակերպության կողմից Հատուկ մրցանակ, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի կողմից սահմանված հատուկ մրցանակ՝ դափնեկիրների ելույթ (այդ թվում՝ Վրաստանից դափնեկրի համար) տուն-թանգարանի համերգային դահլիճում, ձայնասկավառակներ եւ նոտաներ՝ ժյուրիի անդամ, դաշնակահար Հայկ Մելիքյանի կողմից, Կոմիտասի դաշնամուրային երկերի ժողովածու՝ Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ Դավիթ Ղազարյանի կողմից, նվերներ պատանեկան «Ա» խմբի մասնակիցների համար՝ «Արտվայն» կազմակերպության կողմից, նվեր «Տոգնանա Արմենիա»-ի կողմից, որն ուղեւորվեց Ուֆա, XX եւ XXI դարերի կոմպոզիտորների լավագույն կատարման համար սահմանված ֆինանսական մրցանակ՝ դաշնակահարուհի, նույն մրցույթ-փառատոնի դափնեկիր Լիլիթ Գրիգորյանի կողմից, ինչպես նաեւ Աննա Մկրտչյանի նախաձեռնությամբ մի խումբ ծրագրավորողների եւ Բախշյան ընտանիքի կողմից շնորհվեց «Հուսո մրցանակ» եւ դրամական մրցանակներ՝ բոլոր մարզաբնակ դափնեկիրներին:

Մրցույթ-փառատոնի հանդիսավոր փակման արարողությունը անցավ շատ ջերմ եւ բարեկամական մթնոլորտում՝ լի հույսով եւ հավատով, որ Առնո Բաբաջանյանի լուսաշող աստղը շարունակելու է լուսավորել տաղանդաշատ պատանի դաշնակահարների ստեղծագործական ուղին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.

**Հայտարարություն՝ աճուրդի մասին**

Արմեն Վալերիի Մկրտչյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 03.08.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/1328/04/20 սնանկության գործով 22.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված Արմեն Վալերիի Մկրտչյանի ստորեւ նշված անշարժ գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Ջուլիետտա Հրաչյայի Մեսրոպյանին, Սերգեյ Հրաչյայի Մեսրոպյանին եւ Հայաստան Արսենի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ օգտին գրավադրված ՀՀ, Երեւան, Աջափնյակ, Սիսակյան փողոց 18բ շենքի թիվ 5 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը, (մակերեսը՝ 63,2քմ, հարկայնությունը՝ 9/2 սեփականության իրավունքի վկայական՝ 11092012-01-1122, կադաստրային ծածկագիր՝ 01-001-0021-0001-014-005): Մեկնարկային գին՝ 22,320,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում է գրավի առարկա: Գույքը ծանրաբեռնված է բնակիչներով, որոնք գույքի ձեռք բերման դեպքում ենթակա են վտարման:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 200,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Արմեն Վալերիի Մկրտչյանի սնանկության գործով թիվ 2480103340300000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետ—աբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com):

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հուլիսի 24-ին գումարվելու է «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝ +374 10 59 55 55:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

850-ԱՄՅԱԿ

# ՇՆՈՐՀԱԼՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

**Հունաստանում, Հայաստանի Հանրապետության դեսպանության նախաձեռնությամբ, հուլիսի 7-ին կայացել է միջնադարի մեծ մտածող, բանաստեղծ, աստվածաբան, 12-րդ դարի հայոց կաթողիկոս Սուրբ Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված գիտաժողովային միջոցառում:**



Միջոցառումը կայացել է Աթենքում ՀՀ դեսպանատան շենքում, որտեղ ներկա են եղել Հունաստանում հավատարմագրված դիվանագետներ, մտավորականներ, հոգեւոր դասի, հունահայ համայնքի ներկայացուցիչներ, ուսանողներ:

Ըստ աղբյուրի՝ Հունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանն իր ողջույնի խոսքում նշել է. «2021 թվականի նոյեմբերի 23-ին՝ Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 41-րդ նստաշրջանի ժամանակ, Հայաստանի կողմից ներկայացված Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի մահվան 850-րդ տարելիցը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների օրացույց»-ում, որտեղ Հայաստանի հայտին աջակցել են Հունաստանը, Կիպրոսը, Իտալիան եւ Սիրիան: Չափազանց կարեւոր է նման միջոցառման կազմակերպումն այստեղ՝ Աթենքում՝ որպես երախտագիտության նշան մեր հույն ընկերներին իրենց աջակցության համար: Թերեւս այս աջակցության պատճառներից մեկն էլ գալիս է նրանից, որ Ներսես Շնորհալին եկեղեցիների միասնության մեծ ջատագովն էր: Ներսես Շնորհալին անխոնջ աշխատում էր հունական, լատինական եւ սիրիական եկեղեցիների հետ միության ուղղված քննարկումներում եւ բանակցություններում. մի խնդիր, որը, թվում էր, մոտ է հաջողության, այնինչ Ներսես Շնորհալու մահվամբ պայմանավորված՝ գործընթացը վերջնական ավարտին չհասավ: Պատահական չէ նաեւ այն հանգամանքը, որ Հռոմի կաթոլիկ եկեղեցին նրան մեծարում է որպես Սուրբ Ներսես Կլայեցի՝ եկեղեցու միասնությանն ուղղված կարեւոր ջատագով լինելու փաստի համար»:

Ըստ աղբյուրի՝ այս առանձնահատուկ տարելիցը նշելու համար Հունաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանի նախաձեռնությամբ հատուկ հրավերով դասախոսությամբ հանդես է եկել Օքսֆորդի համալսարանի Գալուստ Գյուլբենկյանի անվան հայագիտության ամբիոնի ղեկավար, պրոֆեսոր Թեո Մաարթըն վան Լինտը՝ ներկայացնելու մեծ Կաթողիկոսի մտքի արդիականությունը՝ նշելով. «Թերեւս կարելի է հասկանալ Ներսես Շնորհալու բացառիկ անհատականությունը ու ձեռքբերումները, եթե մեկը գիտակցի, որ դրանք բխում են ոչ միայն հազվագյուտ, աստվածատուր տաղանդներից, այլ հատկապես նրա խորը հոգեւորությունից եւ անձնական հավատքից»: Շարունակելով խոսքը՝ նա կարեւորել է. «Ներսեսի բանաստեղծությունները հավատացյալին առաջարկում են անմիջական եւ սերտ ըմբռնում մարդկության նկատմամբ Աստծո հոգատարության մասին՝ հեշտությամբ եւ կիրառելի կերպով նրանց հասցնելով աստվածաշնչյան տեքստը»: Բանախոսն ընդգծել է նաեւ, որ հատկապես «աչքի է ընկնում Ներսես Շնորհալու էկումենիկ ոգին, որը ծնվել է Քրիստոսի մարմնի միասնության խոր ցանկությունից: Դրան զուգընթաց ընթանում է նրա հոգատարությունը հայ ժողովրդի անվտանգության եւ հոգեւոր բարեկեցության նկատմամբ ցնցումների ու այս ու այն կողմ սփռված լինելու ժամանակաշրջանում»:

Ամփոփելով դասախոսությունը՝ պրոֆեսոր Թեո Մաարթըն վան Լինտը շեշտել է հետեւյալը. «Ներսես Շնորհալին եղել է հայ ժողովրդի առաջնորդը: Նրա անունից ես կցանկանայի խնդրել համաշխարհային առաջնորդներին խիզախություն եւ կարեկցանք ցուցաբերել՝ գտնելու ուղիներ՝ անհապաղ դադարեցնելու Ադրբեջանի կողմից 120 000 արցախահայության անօրինական եւ կյանքին վտանգ սպառնացող շրջափակումը»:

Հունաստանում ՀՀ դեսպանության տեղեկացմամբ՝ ելույթից, ինչպես նաեւ հարցուպատասխանից հետո հյուրերը վայելել են հայկական եւ հունական երաժշտություն՝ հունահայ երկու մեծագույն երաժիշտների՝ Ֆիլիպոս Նակասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, նշանավոր կիթառահար Յակովոս Քոլանյանի եւ Հունաստանի Ամերիկյան քոլեջի երաժշտության պրոֆեսոր, հայտնի դաշնակահար Քրիստինե Թոքաթլյանի կատարմամբ, որին հետեւել է ընդունելություն՝ հայկական գինիների եւ կոնյակի, ինչպես նաեւ տարբեր ուտեստների հյուրասիրությամբ:

ՇՈՌՈՒ ԲԻԶՆԵՍ

## ՀԱՅՏՆԻ ՌԵՓԵՐԻ ԵՐԱԶԱՆՔԸ

Ռուսաստաբնակ հայ երգիչ Խչոն օրերս հյուր էր հայտնի ռեփեր Բաստայի «MC TAXI» հաղորդմանը, որտեղ պատասխանել է մի քանի հարցի եւ խոսել ամուսնության մասին:

Հարցին, թե ինչու է Խչոն գրում տխուր երգեր սիրո մասին, եւ արդյոք ունի ընտրյալ, երգիչը պատասխանել է. «Ես չեմ համարում, որ իմ երգերը տխուր սիրո մասին են: Ես երջանիկ եմ, որ գիտեմ, թե ինչ է նշանակում սիրել: Նաեւ ես չեմ կարծում, որ այն մարդը ով չի սիրում, կարող է գրել երգեր այդ մասին»:

Երգիչը խոսել է իր երազանքի մասին եւ նշել, որ ուզում է հայկական մեծ հարսանիք: «Ներկա պահին ամենամեծ երազանքս, ինչքան հնարավոր է, շուտ ընտանիք կազմելն է: Հուշեմ՝ չգիտեմ՝ դա կլինի Հայաստանում, թե Ռուսաստանում, բայց միանշանակ է, որ լինելու է հայկական մեծ հարսանիք»,-ասել է նա:

Նշենք, որ Խչոն ելույթ կունենա հայ հանդիսատեսի առաջ այս տարի՝ օգոստոսի 12-ին, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

## ՔԹԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բլոգեր, տիկտոկեր Օվսաննա Խաչատրյանը (Օվսիկ) յութուբյան իր ալիքում պատմել է իր 2-րդ ռինոպլաստիկայի (քթի պլաստիկ վիրահատություն) մասին:

Օվսիի խոսքով՝ իր առաջին վիրահատությունը եղել է անհաջող, եւ բժիշկը վիրահատությունից հետո ասել է, որ իրենք օրական 10 քիթ են վիրահատում, եւ ընդամենը մեկինն է, որ լավ է լինում, որի կարին էլ տեղադրում ենք կայքում:

«1-ին վիրահատությունից անցել է 5-6 տարի,եւ ես հոգեպես նոր եմ պատրաստվել 2-րդ անգամ վիրահատել քիթս»:

Բլոգերն ինստագրամյան իր էջում տեղադրել է լուսանկար՝ վիրահատությունից հետո:

## ՍԻՐՏՆ ԱԶԱ՞Տ Է

Երգչուհի Անահիտ Սիմոնյանն ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում հետեւորդների հետ հարցուպատասխան է կազմակերպել: Հարցին, թե նա ինչով է զբաղվում ազատ ժամանակ, Անահիտ Սիմոնյանը տեղադրել է տեսանյութ եւ գրել. «Ազատ ժամանակ հաճախում եմ արաբական պարերի, երգում եմ ու սերիալներ եմ նայում»: Երգչուհին վերջում խոսել է նաեւ այն մասին, թե արդյոք ունի սիրած տղամարդ, թե ոչ: Հետեւորդի հարցին Անահիտ Սիմոնյանը պատասխանել է, որ չունի: Հիշեցնենք, որ 2021 թվականին կորոնավիրուսից մահացել է երգչուհու նախկին ամուսինը՝ երգիչ, երգահան Հայկոն: Զույգն ամուսնացել էր 2010 թվականին, սակայն 2020 թվականին հայտնի դարձավ, որ Հայկոն եւ Անահիտ Սիմոնյանն ամուսնալուծվել են:

*Նյութերը՝ ԻՆԵՍԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԵՐԹԱԿԱՆ ՈՍԿԻՆ

Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում ընթացող ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնության 81 կգ քաշային կարգայինների մրցապայքարում ՀՀ հավաքական թիմի կազմում հանդես եկած՝ ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի սան Էմմա Պողոսյանը (անձնական մարզիչ՝ ՀՀ վաստակավոր մարզիչ Արտաշես Ներսիսյան) երկամարտի 225 կգ արդյունքով դարձավ հաղթող:

Մեր մարզուհին «հրում» վարժաձեւում 129 կգ արդյունքով սահմանեց Եվրոպայի պատանեկան նոր ռեկորդ:

## ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻՑ

Բռնցքամարտի Հայաստանի երիտասարդական հավաքականը՝ Վազգեն Բադալյանի գլխավորությամբ, հաջող մրցելույթներ է ունեցել Վրաստանի Գորի քաղաքում կայացած աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Գեորգի Կանդելակիի անվան միջազգային մրցաշարում, որին մասնակցում էին Վրաստանի, Հայաստանի, Ղազախստանի, Հունգարիայի, Իսրայելի, Թուրքիայի եւ Ադրբեջանի բռնցքամարտիկները:

Հայ բռնցքամարտիկներից մրցաշարի հաղթողներ դարձան 48 կգ քաշային Հովհաննես Հարությունյանը, 75 կգ քաշային Արմեն Պողոսյանը եւ 86 կգ քաշային Դավիթ Սիմոնյանը: Ընդ որում՝ Հովհաննիսյանն ու Պողոսյանը եզրափակչում հաղթեցին համապատասխանաբար ադրբեջանցի եւ թուրք մարզիկներին: Արծաթե մեդալակիրներ դարձան 54 կգ քաշային Արման Արզումանյանը, 63,5 կգ քաշային Հարություն Խաչատրյանը եւ գերծանր քաշային Միսակ Տեպանյանը: Եվս երեք բռնցքամարտիկ՝ Լեւոն Վարդումյանը, Արթուր Ավետիքյանը եւ Արթուր Խաչատրյանը, նվաճեցին բրոնզե մեդալ: Մոտ օրերս մեր երիտասարդական ընտրանին ուսումնամարզական հավաք կանցկացնի Օլիմպավանում եւ կմասնակցի Մինսկում կայանալիք ԱՊՀ երկրների առաջնությանը:

## ՀԱՄԱԼՐՈՒՄ՝ ԹԻՄՈՒՄ

«Ալաշկերտի» կազմը համալրել է Գվինեա-Բիսաուն ներկայացնող կենտրոնական կիսապաշտպան Միմիտո Ռոշան:

25-ամյա ֆուտբոլիստը պորտուգալական ֆուտբոլի սան է, 3 մրցաշրջան անցկացրել է «Վիտորիա Գիմարայեշ»-ի», 2 մրցաշրջան՝ «Ակադեմիկայի» կազմում:

Միմիտոն հանդես է եկել նաեւ հունական «Պանաիտոլիկոս», բուլղարական «Չեռնո Մորե» թիմերում, իսկ նրա նախորդ ակումբը ռումինական «Արջեշն» էր:

Գվինեա-Բիսաուի ազգային հավաքականի անդամ հանդիսացող Միմիտոն ժամանակին ներկայացրել է Պորտուգալիայի Մ-19 (2 խաղ) եւ Մ-20 (6 խաղ) հավաքականները:

*● Հունիսի 12-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Հրաշագործը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ԱԿՏԵՐ

**ՀԱՐՑ. Վարչական ակտերը ո՞ր դեպքում եւ ի՞նչ ժամկետներում են ներկայացվում հարկադիր կատարման:**

*Մանուկ Արսենյան (26 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածին համապատասխան վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝վարչական ակտը, որպես ընդհանուր կանոն, դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

## ՎԻԶԱ

**ՀԱՐՑ. Ինչպե՞ս ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա:**

*Արսեն Սեւոյան (33 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** Սիրիայի՝ ազգությամբ հայ քաղաքացիները կարող են ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա առանց հրավերի: ՀՀ պետական սահմանի անցման կետերում վիզաները տրվում են ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության ստորաբաժանման կողմից:

*ՀՀ արտաքին գործերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Սիրիահայերն ազատվում են վիզաների համար վճարումներից:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



Ամարասի վանական համալիրի վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքներն իրականացնելիս բակի մուտքի դիմաց ի հայտ են եկել կոպտատաշ սալ քարերով ծածկված գծային հատվածներ:

Տարածքը մասնակի մաքրելուց եւ առաջին սալերը հեռացնելուց հետո ի հայտ է եկել հորանի ներքին կառուցվածքը:

Տեղեկությունների համաձայն՝ անցյալ դարասկզբին վերոնշյալ վանքային համալիրն օգտագործվել է կոլտնտեսության կողմից, այդ իսկ պատճառով դժվար է այսօր ասել, թե հորանն ինչի համար է կառուցվել եւ ինչին է ծառայել: Հեղինակային խմբի կողմից որոշում է կայացվել հորանը պահպանել ամրավորված ապակու տակ՝ տեսանելի դարձնելով այն այցելուների համար:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:


## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | |
|---|---|
| Շիրակ | +7 +12<br>+18 +21 |
| Կոտայքի լեռներ | +9 +11<br>+18 +20 |
| Կոտայքի նախալեռներ | +14 +16<br>+22 +24 |
| Գեղարքունիք | +11 +13<br>+17 +20 |
| Լոռի | +9 +14<br>+19 +23 |
| Տավուշ | +15 +19<br>+24 +28 |
| Արագածոտնի լեռներ | +9 +10<br>+16 +19 |
| Արագածոտնի նախալեռներ | +13 +17<br>+22 +26 |

| | |
|---|---|
| Արարատ | +16 +19<br>+26 +28 |
| Արմավիր | +15 +17<br>+25 +27 |
| Վայոց ձորի լեռներ | +9 +12<br>+18 +20 |
| Վայոց ձորի նախալեռներ | +16 +19<br>+26 +28 |
| Սյունիքի հովիտներ | +17 +22<br>+32 +35 |
| Սյունիքի նախալեռներ | +13 +16<br>+22 +24 |
| ԼՂՀ | +17 +22<br>+32 +37 |
| Երեւան | +16 +18<br>+26 +28 |


Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.7.2023**

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:


«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*